ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն Լևոն Մկրտչյանին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Ատոմ Հակոբյանից
(դիմողի անուն, ազգանուն)

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Մեծ Մասրիկ,
093932126, atomakopyan@mail.ru
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ հետևյալ պահանջվող փաստաթղթերը.

1. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ,
2. Մոտիվացիոն նամակ,
3. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝ _____ **Ա.Հակոբյան**

25 ապրիլ 2016

9885-16

Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

Ատոմ Վլադիմիրի Հակոբյան, ծնված՝ 10.04.1978թ.

- 2003թ.-ից ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի տնօրեն:
- 2009թ.-ից ՀՀ Նախագահին կից Հանրային խորհրդի անդամ /Գիտության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հանձնաժողով/:
- Գիտական, մշակութային և հասարակական մի շարք պարբերականների թղթակից, լրագրող, բանաստեղծ:
- «Տնօրենների՝ իրավական ակտերից օգտվելու և կառավարչական հմտությունների զարգացում, իրավական խորհրդատվություն» երկամյա վերապատրաստում-դասընթացներ, միջազգային դրամաշնորհային ծրագրի ղեկավար, վերապատրաստող /վերապատրաստվել են Գեղարքունիքի մարզի բոլոր տնօրենները /2014թ./:
- ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. փետրվարի 24-ի թիվ 104 Ա/Ք հրամանով հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալու նպատակով վերապատրաստում իրականացնելու երաշխավորված «Կրթություն առանց սահմանի» հասարակական կազմակերպություն, վերապատրաստող:
- Դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային և մարզային հանձնաժողովներ, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հանձնաժողով, «Տարվա լավագույն ուսուցիչ, տնօրեն, դաստիարակ» մարզային հանձնաժողովներ /2008-2016/,
- 20-ից ավելի գիտական, հրապարակախոսական հոդվածների և գրքի հեղինակ: Տպագրվել է հանրապետական և մարզային մամուլում /«Կրթություն» ,«Առավոտ», «Գեղամա աշխարհ», գրախոսական հոդվածներ, պատմվածքներ, էսսեներ, բանաստեղծություններ/: Պատմա-աշխարհագրական ակնարկներով հանդես է եկել հեռուստատեսությամբ:
- Կրթական ու մշակութային մեկամյա սեմինարի զեկուցող մասնակից Չինաստանի Պեկին, Շանհայ, Չժենչժու և Չանշա քաղաքներում: «Մշակութային քաղաքականություն» թեմայով Պեկինի մշակութային հարցերով կենտրոնական ակադեմիայի խորհրդաժողովում ՀՀ ներկայացուցիչ /2015/:
- Վերջին տասը տարիներին մասնակցել է ՀՀ ԿԳ նախարարության և տարբեր կազմակերպությունների կողմից Երևանում, Ծաղկաձորում և Աղվերանում կայացած հանրակրթության ոլորտին և կրթության զարգացմանը վերաբերող տասնյակից ավելի սեմինարների և աշխատաժողովների, ԱՊՀ անդամ պետությունների կրթության ոլորտի աշխատողների համագումարին:
- Կրթական ակտիվ գործունեության համար խրախուսվել է ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ ԿԳ նախարարի, տարբեր գերատեսչությունների, պետական մարմինների ու կազմակերպությունների կողմից:
- Հանրային քննարկման ներկայացված /Հանրային խորհուրդ, Դպրոց-կենտրոնների միություն և Գեղարքունիքի մարզպետարան/ կրթության ոլորտի հարյուրից ավելի իրավական ակտերի նախագծերում ներկայացրել է նկատառումներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնց գերակշիռ մասը ընդունվել է, մասնավորապես «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, Օրինակելի կանոնադրություն, «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգ, ՀՀ ԿԳ նախարարի 26.08.2010թ. թիվ 1344 Ա/Ք հրամանով հաստատված տնօրենի հարցաշար, «Հայրենասիրական կրթության և դաստիարակության հայեցակարգ», ՀՀ ԿԳ նախարարի 18.01.2011թ. «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը հաստատելու մասին» N 23-Ն հրաման, ՀՀ ԿԳ նախարարի 24.11.2010թ. N 1640-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգ», «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում և այլն:
- «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացրել է «Ներառական կրթության ինդեքս. ուսուցման և մասնակության զարգացումը դպրոցում» ծրագիրը:
- Տպագրության է պատրաստում «Հանրակրթական դպրոցի տնօրենի իրավական թղթապանակ» և «Ուսուցչի ուղեցույց» ձեռնարկները:

Մոտիվացիոն նամակ

ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում ներգրավման դեպքում հանդես կգամ կրթական համակարգի մի շարք նախաձեռնություններով, մասնավորապես անհրաժեշտ է.

1. Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտի բազմաթիվ ու բազմապիսի իրավական ակտերը ի մի բերելու, կրթության իրավունքի համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող բոլոր հիմնական նորմերը համակարգելու և կանոնակարգելու, դրանց մեջ առկա հակասությունները վերացնելու, կրթության համակարգի աշխատողների և սովորողների գործունեությունը հստակեցնելու նպատակով մշակել Հայաստանի Հանրապետության կրթության օրենսգիրք և ոլորտի մյուս բոլոր օրենքները համապատասխանեցնել կրթության օրենսգրքին:
2. Վերախմբագրել-վերաշարադրել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը և «Հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», դրանցից բխող մի շարք նորմատիվ իրավական ակտեր, մասնավորապես ուսուցչի մրցույթի, ուսուցչի վերապատրաստման, ատեստավորման և տարակարգի շնորհման, տնօրենի վերապատրաստման և հավաստագրման, ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատման կարգերը, ապահովելով իրավական հավասար դաշտի առկայություն /օրինակ՝ ուսուցիչն ընդունվում է աշխատանքի մրցույթով, իսկ մնացած մանկավարժական աշխատողները առանց մրցույթի, տնօրենն ընդունվում է մրցույթով, իսկ տնօրենի տեղակալները՝ առանց մրցույթի/:
3. Ինստիտուտցիոնալ առումով կայացնել ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի գործունեությունը:
4. Կայացնել ու հստակեցնել մանկավարժահոգեբանական կենտրոնների գործառույթները:
5. Վերանայել ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը, ձևաթղթերը և դրանք վարելու կարգերը:
6. Մշակել ռազմահայրենասիրական դաստիարակության հայեցակարգ:
7. Զարգացնել ՏՀՏ ոլորտը ուսումնական հաստատություններում:
8. Մշակել և ներդնել սովորողների բացակայության հաշվառման նոր կարգ:
9. Տնօրենի ընտրության և խորհրդի ձևավորման գործընթացում մեծացնել ՀՀ կրթության և գիտության նախարարության դերակատարությունը:
10. <<Հանրակրթական ուսումնական հաստատության ներքին գնահատման ցուցանիշներ ու չափանիշներ և դրանց հաշվարկման մեթոդաբանություն>> ձեռնարկի և <<Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման հաշվետվության ձևի և մեթոդական ուղեցույցի>> պահանջները հարկ է համապատասխանեցնել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N 954 - Ն որոշմամբ հաստատված օրինակելի կանոնադրության պահանջներին, այն է՝ տարրալուծել-տարանջատել, տարբերակում դնել հանրակրթական ուսումնական հաստատության տեսակներիի միջև, դիֆերենցիալ մոտեցում դրսևորել տվյալ հաստատության ներքին գնահատման ցուցանիշներին ու չափանիշներին /օրինակ՝ սահմանամերձ գյուղի դպրոցը չունի լոկալ կաթսայատուն, քանզի սահմանամերձ այդ գյուղը ուղղակի գազաֆիկացված չէ/, չկիրառել նույնատիպ հաշվարկման

մեթոդաբանություն, հաշվետվության ձևերը կազմել ոչ թե միատեսակ պահանջներով, այլ այլ այդ պահանջները ստորադասել «եթե՝ ոչ, ապա՝ ինչու» օբյեկտիվ, բնական ենթահարցերով:

11. Տարանջատել «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը», դրանք դարձնելով ավելի ճկուն:
12. Վերանայել կրթության պետական տեսչության և կրթության ազգային ինստիտուտի կառուցվածքը, գործունեության բովանդակությունն ու գործառույթները:

Հակիրճ վերլուծություն

վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Հանրակրթություն

Նախադպրոցական կրթություն: ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից վերջին 3 տարիների ընթացքում կարևորվել է երեխաների վաղ ընդգրկումը կրթական ծրագրերում: Նախադպրոցական կրթության մատչելիության մեծացումը և նախակրթարանների ստեղծումը դիտարկվել է որպես գերակա ուղղություն: Նախադպրոցական կրթության զարգացման նպատակով «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվել են նախակրթարանների հիմնում հանրապետության մի շարք մարզերում: Այդ նպատակով երեք տասնյակից ավել հաստատություններում իրականացվել են շինարարական աշխատանքներ: Նախակրթարանների ընդգրկվել են շուրջ 1500 երեխա:

Նշանակալից էր Նախադպրոցական կրթության զարգացման 2016-2025 թվականների ռազմավարական ծրագրի մշակումը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից 2013 թվականից առաջին անգամ կազմակերպված և անցկացված նախադպրոցական ուսումնական հաստատությունների «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթները նպաստում են Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժի դերի և հեղինակության բարձրացմանը:

Հանրակրթություն: 2013 թվականից ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հանրակրթության ոլորտում իրականացված բարեփոխումներն ուղղված են եղել 12-ամյա կրթության դասագրքերի, ուսումնաօժանդակ գրականության ստեղծման և ներդրման աշխատանքներին, ինչպես նաև հանրապետության մանկավարժական և ղեկավար կադրերի կարողությունների զարգացմանը:

Ապահովվել է 2-4-րդ դասարանների «Շախմատ» առարկայի դասագրքերի և խնդրագրքերի հրատարակումը: Բեռնաթափվել են ուսումնական ծրագրերը, լրամշակվել դասագրքերը, իրականացվել դպրոցների փորձնական վարկանիշավորում: 9-ամյա կրթությունից 12-ամյա կրթության անցնելու նպատակով վերանայվել են մի շարք իրավական ակտեր: Հանրակրթության որակի բարելավման նպատակով կարևորվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման աշխատանքները: Ընդլայնվել է ազգային փոքրամասնությունների հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները, տպագրվել «Եզդիերեն և «Քրդերեն» դասագրքեր:

Իրականացվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման մեթոդաբանության վերանայման և ցուցանիշների վերախմբավորման գործընթաց:

Իրականացվել են «Ազգային երգ ու պար» և «Երաժշտություն» առարկաների փորձնական ծրագրերը 13 հիմնական դպրոցների 5-րդ դասարաններում, իսկ 2015-2016 ուսումնական տարվանից ՀՀ ևս 100 հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-րդ դասարաններում ներդրվել է «Ազգային երգ ու պար» առարկան (50-ը՝ Երևանում, 50-ը՝ մարզերում):

Մշակվել է «Առաջին դասարանի աշակերտներին անվճար համակարգիչ տրամադրելու փուլային ծրագիրը»:

Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ սահմանվել են կրթության զարգացման նպատակները և գերակայությունները:

2016 թվականի հունվարից ՀՀ բոլոր դպրոցներին հասանելի դարձավ «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաներից էլեկտրոնային կրթական նյութերը /«http://esource.armedu.am/:

2014 թվականի սեպտեմբերի 9-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության և «Երկրապահ կամավորական միություն» հասարակական կազմակերպության միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում 2015 թվականից սկսած ՀՀ բոլոր դպրոցներում ձևավորվել են «Պատանի երկրապահ» ակումբներ:

Դպրոցներում ռոբոտաշինության զարգացման նպատակով հանրապետության հինգ տասնյակ հանրակրթական ուսումնական հաստատություններում ստեղծվել են ռոբոտաշինության խմբակներ:

100-ից ավելի դպրոցների /հիմնականում՝ ավագ դպրոցների/ տրամադրվել է նոր գույք /սեղան, աթոռ, համակարգիչ և այլն/:

2015 թվականին մշակվել է կրթության գերազանցության ազգային ծրագրի նախագիծը /դեռ գտնվում է հանրային քննարկման փուլում/:

2015 թվականից կարևորվել են ազգային փոքրամասնությունների համար դպրոցներում ուսումնական բազայի բարելավման և կադրերի մասնագիտական զարգացման գործընթացները: Նրանց ուսուցիչների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:

Հայաստանի Հանրապետությունում շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնության անցկացման նպատակով մշակվել է ՀՀ շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնության և կազմակերպման կանոնակարգը: Ստեղծվել է կազմկոմիտե և անցկացվել է շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնությունը, որին մասնակցել են եվրոպական 9 երկրների թիմեր:

2015 թվականին իրականացվել է դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման համակարգի ընդլայնման գործընթացը: ՀՀ Վայոց ձորի, Սյունիքի և Արարատի մարզերի բոլոր հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին տրամադրվել է դպրոցական նախաճաշ:

Մասնագիտական կրթություն

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն: Կրթության բնագավառի զարգացումներում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կարևոր տեղ է տվել մասնագիտական կրթության ոլորտին: Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումներն ուղղված են եղել մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի պահանջներին և միջազգային չափանիշներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը:

Մշակվել են եվրոպական չափանիշներին համապատասխան նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների 17 պետական կրթական չափորոշիչներ, համապատասխան

ուսումնական պլաններ ու մոդուլային ծրագրեր, վերապատրաստվել են ուսումնական հաստատությունների դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ, տնօրեններ և տնօրենի տեղակալներ, չափորոշիչներ մշակող փորձագետներ, ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդների անդամներ:

2013 թվականին ՀՀ ԿԳ նախարարության և Հայ ոսկերիչների համաշխարհային ասոցիացիայի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որը կարևորում է մասնագիտական կրթության և ուսուցման շարունակական զարգացումը:

Եվրոպական կրթական հիմնադրամի հետ համատեղ իրականացվել են աշխատանքներ տասից ավելի տարածաշրջանային քոլեջներում կարիերայի կենտրոնների ներդրման և գործարկման ուղղությամբ: Մշակվել է «Մասնագիտական ուսումնական հաստատություններում կարիերայի կենտրոնների զարգացման» ուղեցույց ձեռնարկը, որով և նախատեսվում է պլանավորել և իրականացնել կարիերայի ուղղորդման աշխատանքները քոլեջներում:

ՀՀ մասնագիտական կրթության և ուսուցման գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելու նպատակով 2014-2015 ուստարվանից կրեդիտային համակարգը փորձնական ներդրվել է մի շարք քոլեջներում:

Մշակվել և հաստատվել է «Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման ընթացակարգը», որի համաձայն անցկացվել են պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննություններ:

Սահմանված կարգով անցկացվել է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրման գործընթաց:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն: ՀՀ կրթության և գիտության նախարարության համար բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի գերակա խնդիրն է եղել կրթության որակի, մատչելիության և մրցունակության խթանումը, Մշակվել են ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգի մեթոդաբանությունը, ցուցանիշները, հաշվարկի մեխանիզմները և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից լրացվել են փորձնական վարկանիշավորման համար անհրաժեշտ տվյալների ցանկերը:

2013 թվականի սեպտեմբերին ԲՈՒՀ-երի հետ կնքվել են նորարարական ծրագրերի իրականացման դրամաշնորհային պայմանագրեր: 2013 թվականի նոյեմբերին կազմվել և հաստատվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամի գործարկման ղեկավար ձեռնարկի հայերեն տարբերակը:

Վերանայվել է ընդունելության քննությունների համակարգը՝ իրականացվել են միասնական քննությունների համակարգչային ադապտիվ թեստավորման միջոցով կազմակերպման հնարավորության վերլուծական հետազոտումներ և տրվել է ներդրման ծախսերի ֆինանսական գնահատականը:

2013 թվականին մեկնարկել է «Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու մասին» գործընթացը, որի նպատակով սահմանվել է միջին որակական գնահատականի շեմ,որի արդյունքում հնարավորություն է ընձեռվել պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում իրականացնել բազմաթիվ ուսանողների համար: Միաժամանակ, իրակացվել է սոցիալապես անապահով ուսանողների համար բարձրագույն կրթության մատչելիության մեխանիզմների մշակման գործընթացը: «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում առաջարկվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ, համաձայն որի՝ հնարավորություն է ընձեռվում ԲՈՒՀ-երի միջոցների հաշվին

ուսման վարձի փոխհատուցում իրականացնել սոցիալապես խոցելի խմբերի ուսանողներին և ստեղծել հավասար ֆինանսական աջակցության պայմաններ՝ միևնույն կարգավիճակ ունեցող ուսանողների համար: Սահմանվել է նաև ուսման վարձի առավելագույն չեմ՝ ըստ կրթական աստիճանների, մասնագիտությունների և հավատարմագրման արդյունքների, ինչպես նաև ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից հաստատված հատուկ սոցիալական ծրագրերի:

«Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվել են մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏՀ-ի) մշակման, տեղադրման, ինչպես նաև այդ հաստատությունների ներկայացուցիչների վերապատրաստման աշխատանքներ:

ԲՈՒՀ-երի ինքնուրույնությունը մեծացնելու նպատակով իրականացվել է բարձրագույն ուսումնական հաստատության անցում կազմակերպաիրավական նոր ձևի՝ հիմնադրամի:

Իրականացվել են նաև Հայաստանի Հանրապետությունում Բոլոնիայի քարտուղարության գործունեության ապահովման աշխատանքները, որի արդյունքում կազմակերպվել են Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի աշխատանքային խմբերի մի շարք հանդիպումներ:

Արևելյան գործընկերության ոչ պաշտոնական երկխոսության շրջանակում 2013 թվականի սեպտեմբերի 13-ին Երևանում տեղի է ունեցել 7 երկրների կրթության նախարարների հանդիպումը, իսկ 2013 թվականի հոկտեմբերի 17-18-ը՝ «Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի իրագործում» կրթության նախարարների տարածաշրջանային հանդիպում:

2014 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվել է որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) ներդրման գործընթացից բխող մասնագիտությունների ցանկի և շնորհվող որակավորումների վերանայման գործընթացը: Մասնավորապես, վերանայվել են ՀՀ-ում գործող մասնագիտությունների ցանկը և դրանց շնորհվող որակավորումները՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության միջազգային ստանդարտների դասակարգմանը համապատասխան: Արդյունքում մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը»: Միջազգային փորձագետների հետ համատեղ «TEMPUS «ARMENQA» ԵՄ ծրագրի շրջանակում վերանայվել և մշակվել են ՈԱՇ-ի բարձրագույն կրթության մակարդակները և որակավորումների ազգային շրջանակի մակարդակների նկարագրիչները, ինչպես նաև ուսումնառության վերջնարդյունքներով կրթական ծրագրերի նոր ձևավորման մեթոդները: Կազմվել է բարձրագույն կրթության ՈԱՇ-ի իրականացման ռազմավարությունը: ԵՄ ծրագրերի՝ «INARM» և «ARARAT» TEMPUS, շրջանակներում մշակվել է բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտային որակավորումների ազգային շրջանակի (ՈՈԱՇ) ձևավորման մեթոդաբանությունը:

Հաստատվել են ՀՀ բարձրագույն ուսումնական համակարգի ազգային վարկանիշավորման մեթոդաբանությունը, ցուցանիշները և հաշվարկի մեխանիզմները:

2014թ. իրականացվել են կրթության և գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014թթ. միջոցառումների համալիր ծրագրի մոնիթորինգի և արդյունքների մասին պարբերական հաշվետվությունների ներկայացման աշխատանքներ:

Բնականոն գործել է ավարտական փաստաթղթերի հաշվառման համակարգը, որի միասնական տեղեկատվական շտեմարանում ամփոփված են հանրակրթական դպրոցների, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների տվյալները վերջին 7 ուսումնական տարիների համար:

Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում քաղաքացիական գիտակցության բարձրացման առումով՝ ՀՀ բուհերի կողմից մշակվել և ՀՀ ԿԳ նախարարություն են ներկայացվել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրեր, ինչպես նաև ներկայացվել են առանձին բուհերի կողմից իրականացված հակակոռուպցիոն ծրագրերի

իրականացման արդյունքների մասին տեղեկանքներ: Հակակոռուպցիոն թեմաների ուսուցման կազմակերպման շրջանակներում համապատասխան թեմաներ ուսուցանվում են հանրակրթական դպրոցում՝ «Հասարակագիտություն», նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ «Իրավունքի հիմունքներ», իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ «Տնտեսագիտության հիմունքներ», «Իրավագիտության հիմունքներ» և «Քաղաքագիտության հիմունքներ» առարկաների ծրագրերի շրջանակներում:

2014թ. աշխատանքներ են իրականացվել ՀՀ գիտական աստիճանաշնորհման համակարգում չափանիշների հստակեցման ուղղությամբ: Մշակվել և հաստատվել է ՀՀ գիտական մասնագիտությունների նոր անվանացանկը, որոնց գծով շնորհվում են գիտական աստիճաններ և գիտական կոչումներ:

2015 թվականի մայիսի 14-15 տեղի է ունեցել Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովը և Բոլոնիայի գործընթացի քաղաքականության 4-րդ ֆորումը, որին հանրաճանաչ միջազգային փորձագետներն իրենց գրառումներում Երևանյան նախարարական գագաթաժողովը գնահատել են բարձր: Գագաթաժողովի ընթացքում ընդունվել է Երևանյան կոմունիկեն, որի հիմնական առանձնահատկություններն են բուհերի ուսանողների աշխատանքային իրավունքի խնդիրները և ուսանողական շարժունության ներառականությունը:

2015 թվականին ընդլայնվեց սոցիալապես անապահով ուսանողների շրջանակը՝ ընդգրկելով նաև առաջին կուրսեցիներին:

Շարունակվել է «Պետական ոչ առևտրային կազմակերպության» կարգավիճակ ունեցող ՀՀ պետական բուհերի «Հիմնադրամի» վերակազմակերպման հարցը: Ներկայումս 16 պետական բուհերից 5-ն ունեն «Հիմնադրամի» կարգավիճակ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության գերակա խնդիրները և միջոցառումների ծրագիրը ամրագրված են ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում /71-76-րդ կետեր/ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գերակա խնդիրներում /44-47-րդ կետեր/: